

**ՀՀ սփյուռքի նախարարության 2013թ. ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված
ծախսերի վերաբերյալ**

«ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 163955.50 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 158474.20 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 147416.45 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 11057.75 հազ.դրամ: ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1168-Ն որոշմամբ ծրագրից 5816.40 հազ.դրամ վերաբաշխվել է նախարարության կարիքների համար: Դեկտեմբեր ամսվա հաշիվները 2013 թվականի բյուջեով նախատեսված միջոցներից չեն վճարվել, ինչպես նաև մրցույթներում ներկայացվել են նախատեսվածից ցածր գնային առաջարկներ, այդ իսկ պատճառով գոյացել են չիրացված գումարներ, որոնք վերադարձվել են ՀՀ պետ.բյուջե:Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 144409.0 հազ. դրամ: 2013 թվականի դրամարկղային ծախսը 2012 թվականի համեմատ աճել է 3007.45 հազ. դրամով կամ 2.1 %-ով, որը պայմանավորված է 2013 թվականի պետական բյուջեով ավել հատկացված գումարով:

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 54684.40 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 51472.30 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 44760.62 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 44088.03 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 7384.27 հազ. դրամ: ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1168-Ն որոշմամբ ծրագրից 3292.60 հազ.դրամ վերաբաշխվել է նախարարության կարիքների համար: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 45696.6 հազ. դրամ: 2013 թվականի դրամարկղային ծախսը 2012 թվականի համեմատ նվազել է 1608.57 հազ. դրամով կամ 3.52%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականի բյուջեով նախատեսված միջոցներից չեն վճարվել դեկտեմբեր ամսվա հաշիվները, ինչպես նաև գնման մրցույթների և առանձին ծախսային հոդվածների գծով ձեռնարկված միջոցառումների արդյունքում առաջացել են տնտեսումներ:

3. «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 04) ծրագրով ճշտված պլանը կազմել է 968.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 968.3 հազ. դրամ: 2013թ. ընթացքում համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-114-Ա, ՆԿ-149-Ա հրամանագրերի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 1052-Ա որոշման կազմակերպվել է 3 գործուղում: 2012 թվականի փաստացի կատարված 5595.55 հազ. դրամ դրամարկղային ծախսի նկատմամբ պակաս է կատարվել 4627.25 հազ. դրամով կամ 82.69 %-ով, որը պայմանավորված է նրանով, որ գործուղումներ են իրականացվել նաև ՀՀ սփյուռքի նախարարության «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի մասով/», ինչպես նաև «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրերի շրջանակներում:

4. «Մշակութային միջոցառումների իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 03) ծրագրով նախատեսվել է 221298.60 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 221298.60 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 221298.60 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 214907.00 հազ. դրամ: ՀՀ պետ.բյուջե է վերադարձվել 6391.60 հազ. դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 261595.30 հազ. դրամ: 2013 թվականի դրամարկղային ծախսը 2012 թվականի նկատմամբ նվազել է 40296.70 հազ. դրամով, կամ 15.40%-ով, որը պայմանավորված է «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

- **Նպատակներն ու խնդիրները.**

Ծրագրի նպատակն է Հայ մշակույթի պահպանումը և տարածումը սփյուռքում, հայապահպանությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են մշակութային գործիչների այցելություններ համայնքներ, աջակցություն համայնքներին, գործուղումներ համայնքներ, մեր մեծերին նվիրված միջոցառումներ, համահայկական խորհրդաժողովների անցկացում, ցեղասպանության 100 ամյա տարելիցին ընդառաջ միջոցառումների կազմակերպում, սփյուռքի ուսուցիչների մրցանակաբաշխություն և այլն, թվով 14 միջոցառում:

- **Ծրագրում ընդգրկվել են**

1. **«Մեր մեծերը»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ, դրամարկղայինը՝ 4000.00 հազ.դրամ,իսկ փաստացի ծախսը՝ 3957.00 հազ.դրամ, 43.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետ.բյուջե: Իրականացվել է 5 «Մեր մեծերի» վերաբերյալ գրքույկների տպագրություն, խտասալիկների պատրաստում և 25 բուպեանոց ֆիլմի սցենարի պատրաստում և հեռարձակում նվիրված Հայաստանի շախմատի հավաքականին: 2012 թվականի ֆինանսավորման ծավալը կազմել է 3831.00 հազ.դրամ: Ֆինանսավորման ծավալի

աճը 169.00 հազ.դրամը, կամ 4.41%-ը պայմանավորված է մեծարման միջոցառումների, գրքույկների, խտասալիկների, թերթոնների, գիրք ալբոմների ձեռք բերմամբ:

2. **«ՀՀ-ում համահայկական խորհրդածոդովների անցկացում»** ծրագրի միջոցառման արժեքը 22000.00 հազ. դրամ է, իրականացման համար նախատեսված ֆինանսավորման և դրամարկղային գումարը կազմել է 22000.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 20106.90 հազ. դրամ, տարբերությունը՝ 1893.10 հազ.դրամը վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: Միջոցառման նպատակն է ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել համահայկական խորհրդածոդովներ: Այս տարի իրականացվել է «Համահայկական երիտասարդական ֆորումը»՝ 500 մասնակից, «Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովը»՝ 80 մասնակից, 14-ը արտասահմանից, «Լոբբիստների համահայկական համաժողովը»՝ 56 մասնակից, «Սրտաբանների եվրոկոմկասյան համաժողովը» և «Ֆինանսիստների և բանկիրների համահայկական 2-րդ համաժողովը»՝ 70 մասնակից: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 9789.30 հազ. դրամ՝ 12210.70 հազ.դրամ պակաս քան 2013 թվականին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին իրականացվել է 6 համաժողով, իսկ 2012-ին 1 համաժողով:

3. **«Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 8000.00 հազ. դրամ, որից ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 8000.0 հազ.դրամ, փաստացի ծախսը 7930.0 հազ. դրամ: Տարբերությունը՝ 70.0 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: 2013 թվականի ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ: 2012 թվականին ծրագրի համար նախատեսված է եղել 5000.0 հազ. դրամ՝ 3000.0 հազ. դրամ պակաս, քան 2013 թվականին, որը պայմանավորված է 2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ Ցեղասպանությանը նվիրված գրքերի տպագրությամբ, գիտաժողովների և կլոր սեղանների անցկացմամբ, ինչպես նաև հիշատակի միջոցառումների կազմակերպմամբ:

4. **«Համահայկական մրցանակաբաշխություն»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 7000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 7000.00 հազ.դրամ: Ամեն տարի սփյուռքում հայապահպանություն իրականացնելու գործում մեծ ավանդ ունենալու համար խրախուսվում են սփյուռքի հայազգի մանկավարժները, մշակութային ոլորտի ուսուցիչները և այլ հայապահպանություն իրականացնող անձիք: 2012 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 6300.00 հազ. դրամ: 2013 թվականին 700.00 հազ.դրամ ավել, կամ 11.11%, որը պայմանավորված է անվանակարգերի ավելացմամբ: 2012 թվականին պարգևատրվել է 121 մրցանակակիր, իսկ 2013 թվականին 139 մրցանակակիր:

5. «Աջակցություն համայնքների կայացմանը» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 12000.00 հազ. դրամ, որից ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը 12000.00 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 11739.00 հազ. դրամ: Տարբերությունը՝ 261.00 հազ.դրամ փոխանցվել է պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հայկական խորհրդանիշերի պատրաստում /ՀՀ դրոշ, զինանշան, այբուբեն, հայրենասիրական երգերի սկավառակ, ՀՀ Նախագահի նկարը/ և տրամադրում սփյուռքյան կառույցներին և կազմակերպություններին: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել «ՀՀ օրհներգ» - 210 հատ, «ՀՀ դրոշ» - 210հատ, «Հայկական այբուբենի տառերը» - 210հատ, «ՀՀ զինանշան» - 210 հատ «ՀՀ սահմանադրություն» - 210հատ, «Փաթեթավորման արկղ» - 210 հատ: 2012 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 11829.00 հազ. դրամ: 171.00 հազ. դրամ պակաս կամ 1.45%, որը պայմանավորված է գնումների արդյունքում ներկայացված ավելի ցածր գնային առաջարկով:

6. «Աշխատանք սփյուռքի համայնքների հետ» ծրագրի իրականացման գումարը կազմել է 22000.00 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 22000 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 21714.20 հազ. դրամ: 285.80 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 35 միջոցառում՝ սփյուռքի հայ համայնքներում: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 16134.90 հազ. դրամ: 5865.10 հազ. դրամ պակաս կամ 36.35%, որը պայմանավորված է գործուղումների աշխարհագրությունից:

7. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 16000.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 16000.00 հազ. դրամ, որից փաստացի ծախսը կազմել է 15614.50 հազ. դրամ, տարբերությունը՝ 385.50 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում Ավստրալիայի հայ համայնքի կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով իրականացվել է մշակութային գործիչների գործուղում Ավստրալիա: Տեղի համայնքում գործող թատերախմբերի,երգչախմբերի և այլ արվեստագետների մասնակցություն,նկարիչների անհատական ցուցահանդեսների կազմակերպում և այլ ծառայությունների ձեռք բերում: Ծրագիրն իրականացնելու նպատակով նույն չափի գումար է տրամադրվել նաև 2012 թվականին:

8. «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ Հայաստանում կամ սփյուռքում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.00 հազ. դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 10000.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 9688.60 հազ. դրամ: 311.40 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի

շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է ՀՀ նախագահի երդման արարողությանը ժամանած հյուրերի ընդունելություն և տրանսպորտային ծառայությունների ձեռք բերում, սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքների կազմակերպում Հայաստանում, «Առաջարկություններ համայնքային կառույցների գործունեությունը կազմակերպելու համար» գրքի ձեռքբերում, Մարսելում կայացած «Հայ-Ֆրանսիական Գերազանցության Շաբաթ» միջոցառման համար՝ «Ցուցահանդես-Վաճառք» անունով ամսագրի տպագրություն, դահլիճների վարձակալում: Ծրագիրն իրականացնելու նպատակով նույն չափի գումար է տրամադրվել նաև նաև 2012 թվականին:

10. **«Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.00 հազ. դրամ, դրամարկղայինը՝ 10000.00 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 9721.50 հազ. դրամ, և 278.50 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման շրջանակներում իրականացվել է Հայաստանում բնակվող սիրիահայ, իրաքահայ ուսանողների, աշակերտների, արվեստագետների շրջագայություններ Հայաստանի տեսարժան վայրեր, որոնք ուղորդվել են մշակութային միջոցառումներով: Համերգների, բեմադրությունների, տեխնիկական միջոցների վարձակալությամբ: Ցուցաբերվել է աջակցություն «Արվեստ» համահայկական պատանեկան սինֆոնիկ նվագախմբին: 2012 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 3000.00 հազ. դրամ: 7000.00 հազ. դրամ պակաս, քան 2013 թվականին: Գումարի ավելացումը պայմանավորված է սիրիահայերի արտագաղթով դեպի Հայաստան:

11. **«Հայկական սփյուռքի գիտական կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 4000.00 հազ. դրամ, որից դրամարկղայինը՝ 4000.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 3854.20 հազ. դրամ և 145.80 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի նպատակն է համակարգի համալրումն ու սպասարկումը: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 4935.10 հազ. դրամ: 935.10 հազ. դրամ կամ 18.95% պակաս է կազմել, քան 2012 թվականին, քանի որ ավարտվել է շտեմարանի ստեղծման աշխատանքները, իսկ այժմ իրականացվում է պահպանման և համալրման աշխատանքներ:

12. **«ԱՊՀ հայ համայնքների կրթամշակութային զարգացում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 26000.00 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը՝ 26000.00 հազ. դրամ և փաստացի ծախսը՝ 24298.70 հազ. դրամ, իսկ 1701.30 հազ. դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում համաձայն ՀՀ կառավարության 22.09.2011 թվականի նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ իրականացվելու են ԱՊՀ հայ համայնքների

կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակություն: Իրականացվել է ԱՊՀ երկրների ուսուցիչների վերապատրաստում տեղում կամ ՀՀ-ում, մշակութային միջոցառումներ, հայագիտական առարկաների, ուուցման ծրագրերի, մեթոդական նյութերի ձեռք բերում և տրամադրում համայնքներին, գործուղման ծախսեր: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 27996.60 հազ. դրամ, որը ավել է 1996.60 հազ. դրամով կամ 7.13%-ով, քան 2013 թվականի դրամարկղային ծախսը:

13. «Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 18298.60 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է՝ 18298.60 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 17455.50 հազ. դրամ, իսկ 843.10 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի նպատակն է իրականացնել սփյուռքահայ նշանավոր արտիստների ծրագրեր՝ 4 աջակցություն: Այս տարի իրականացվել է «Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները» գիտաժողովի կազմակերպում, Գրիգոր Գուլգուլյանի գործը «Վրեժ սպանված հոր և եղբայրների համար» գրքի ձեռք բերում, գրքի շնորհանդեսի տպագրական ծառայությունների կազմակերպում, «Սահակ Մեսրոպ» երգչախմբի համերգի կազմակերպում: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 9951.00 հազ. դրամ: 8347.60 հազ. դրամով պակաս, քան 2013 թվականին, որը պայմանավորված է սփյուռքի նախարարության հանդեպ սփյուռքյան կառույցների վստահության բարձրացմամբ սփյուռքի նախարարության հետ համատեղ ծրագրերի իրականացմամբ:

14. «Սփյուռք ամառային դպրոցի կազմակերպում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 40000.00 հազ. դրամ, որից դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 40000.00 հազ. դրամ, իսկ 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 29516.20 հազ. դրամ, կամ 35.52%: Տարբերությունը 10483.80 հազ. դրամը պայմանավորված է մասնակիցների թվի ավելացմամբ՝ նախորդ տարի 70 հոգու փոխարեն մասնակցել է 131 հոգի, իսկ 2013 թվականին 100-հոգու փոխարեն 201 հոգի:

Ծրագրի նպատակն է իրականացնել 5 ուղղությամբ ամառային ուսուցողական դասնթացների կազմակերպում: Իրականացվել է «Ամառային դպրոցի» ուսուցիչների վերապատրաստում, հայոց լեզվի, պարուսույցների, երգի, երիտասարդ առաջնորդների, սփյուռքի լրագրողների դասնթացի կազմակերպում:

5.«Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 13) ծրագրով նախատեսվել է 38606.30 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 38606.30 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 38606.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 38606.30 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 37992.20 հազ. դրամ ՀՀ պետբյուջե է վերադարձվել 614.10

հազ. դրամ, որը ծրագրի իրականացման ընթացքում առաջացած տնտեսումն է: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 18040 հազ. դրամ: 2013 թվականի դրամարկղային ծախսը 2012 թվականի նկատմամբ աճել է 20566.30 հազ. դրամով: Այն պայմանավորված է ծրագրային գումարի ավելացմամբ, որն էլ պայմանավորված է ծավալների մեծացմամբ: «Կոմիտաս Վարդապետի» փառատոնին մասնակցել է 120 մարդ արտերկրից, իրականացվել է փառատոնի բովանդակությամբ գրքի տպագրություն - 420 հատ, վարձակալվել են դահլիճներ և հյուրանոցային սենյակներ: 2012 թվականին իրականացվել է նույնպես 2 փառատոն: 2013 թվականին մասնակիցների քանակը ավելի մեծ է եղել, քան 2012 թվականին:

- **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում է մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

- **Ծրագրում ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.**

«Կոմիտաս Վարդապետի» փառատոնը, «Արվեստ» համահայկական պատանեկան սինֆոնիկ նվագախմբի համերգը

6. «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման

ծառայություններ» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 12) ծրագրով նախատեսվել է 33036.40 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 33036.40 հազ. դրամ: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 29983.20 հազ. դրամ, 2013 թվականի դրամարկղային ծախսը 2012 թվականի համեմատ աճել է 3053.2 հազ. դրամով կամ 10.18%-ով, որը պայմանավորված է կայքը սպասարկելու և ավելի դինամիկ դարձնելու հանգամանքով ներգրավված լրացուցիչ աշխատակցով: 2012 թվականին նման գործառույթ չի իրականացվել, ինչպես նաև 2012 թվականի համեմատ ավելացել է տարածքի վարձավճարի գումարը:

Ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ և ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.

1. «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում,
2. «Էլեկտրոնային գրադարանի ստեղծում»,
3. «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրում և սպասարկում:

7. «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում

սվյուռքի համայնքներին» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 13) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 10000.00 հազ.

դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 10000.00 հազ.դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 8000.00 հազ.դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը աճել է 2000.00 հազ.դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականին գրականության որոշ մասը առաքվել է ՀՀ սփյուռքի նախարարություն ժամանած հյուրերի միջոցով, իսկ մի մասն էլ Հայաստանի Հանրապետության Նախագահի օդանավով:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է ուսումնական, ուսումնամեթոդական գրականության և ուումնասօժանդակ նյութերի և ՀՀ խորհրդանիշերի, սփյուռքի հայ համայնքներին և հայկական դպրոցներին առաքում:

- **Խնդիրները.**

Սփյուռքի հայկական կրթօջախներում այսօր կա ուսումնական և հանրամատչելի գրականության պակաս:

2013 թվականին ծրագրի շրջանակներում մոտ 100 ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների առաքվել է 42000 կտորից ավել գրականություն, 2012 թվականի 50000 կտոր գրականության դիմաց: Դա պայմանավորված է որոշ նյութերի փոքր քաշ ունենալու հանգամանքով (օրինակ աշխատանքային տետրեր, որոնք պահաջված նյութերի մեջ մեծ քանակ են կազմել): Որպես ՀՀ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող փոստային ծառայություններ մատուցող կազմակերպություն՝ առաքման կազմակերպման նպատակով, պայմանագիր է կնքվել «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-հետ 10000.00 հազար դրամ գումարի, որն ամբողջությամբ իրականացվել է:

8. «Սփյուռքի երիտասարդների Հայաստան պարբերական այցելություններ «ԱՐԻ ՏՈՒՆ» (բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 03) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 85000.00 հազ. դրամ: ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 83777.90 հազ. դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 77277.10 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը 6500.80 հազ. դրամ, կամ 8.4% ավել, քան 2012 թվականին, որը պայմանավորված է Սիրիահայ երեխաների մասնակցությամբ: 2012 թվականի 912 մասնակցի դիմաց 2013 թվականին մասնակցել են 1250 երիտասարդներ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է սփյուռքում բնակվող 13-20 տարեկան հայազգի երիտասարդների համար կազմակերպել և իրականացնել 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում 4-

օր ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի /Սևան, Էջմիածին, Նորավանք, Խոր Վիրապ և այլն/ ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերին: Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը և ոգին:

- **Խնդիրները.**

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ: Երիտասարդներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայ ընտանիքին, ինչպես նաև ծրագրի մասնակիցներին ավելի մոտեցնել հայրենիքին:

- **2013 թվականին ծրագրի իրականացման համար նախատեսվել են հետևյալ ծախսային հոդվածները համապատասխան գումարներով:**

- Մասնակիցներին տրամադրվող պարագաներ - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 6912.0 հազ. դրամ:
- Տպագրական աշխատանքներ - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1060.0 հազ. դրամ:
- Մասնակիցների դիմավորում և ճանապարհում - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 873.0 հազ. դրամ:
- Շրջայցեր - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 14740.0 հազ. դրամ:
- Սննդի սպասարկում - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 11701.90 հազ. դրամ:
- Ծաղիկների գնում և առաքում - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 175.50 հազ. դրամ:
- Դահլիճների վարձակալություն - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 360.00 հազ. դրամ:
- Տեսանկարահանում և լուսանկարահանում - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 615.00 հազ. դրամ:
- Փակման հանդիսավոր արարողություն - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.00 հազ. դրամ:
- Կեցություն ճամբարում - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 41887.50 հազ. դրամ:
- Համակարգող փորձագետ - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 3953.00 հազ. դրամ:

9.«Հայաստան–Սփյուռք գործակցություն թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» (բաժին 08, խումբ 03, դաս 01, ծրագիր 09) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 52600.00 հազ.դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 52600.00 հազ.դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 34600.00 հազ. դրամ: 2013 թվականին դրամարկղային ծախսը 18000.00 հազ.դրամ ավել է, քան 2012 թվականինը, որը պայմանավորված է սփյուռքում հայապահպանությանը նպաստող միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ: 2013 թվականին պատրաստվել է 104 հաղորդում և տեսահոլովակ, իսկ 2012 թվականին՝ 84 հաղորդում և տեսահոլովակ: Աճը տեղի է ունեցել ծրագրի ֆորմատի փոփոխության հետ կապված /տևողություն, ցուցադրման ժամ/: Ծրագիրը կատարվել է ամբողջությամբ:

• Նպատակները.

Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել կապերը հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք և սփյուռքում ավելի հասանելի դարձնել սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

• Խնդիրները.

Ծրագրի իրականացման արդյունքում հայկական հեռուստատեսությամբ և հայկական համայնքներում կցուցադրվեն հայապահպանություն քարոզող և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող հեռուստահաղորդումներ, հոլովակներ և ֆիլմեր:

• Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «Սփյուռքի ժամ հեռուստահաղորդաշար» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 10000.00 հազ. դրամ /36 հեռուստահաղորդում/:
- «Մերոնք» - հեռուստանախագծի ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 14000.00 հազ. դրամ /44 հաղորդում/:
- «Խավարում» - Արա Երնջակյան կարճամետրաժ ֆիլմի սցենարի պատրաստման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 1000.00 հազ. դրամ /1 օրինակ/:
- «Արմնյուզ» - հեռուստահաղորդման պատրաստման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 8000.00 հազ. դրամ /20 հաղորդում/:

- «Հուսաբեր» - 4 վավերագրական ֆիլմի ձեռք բերման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ /Փրկված Բեկոր, Համշենահայեր, Թաքուն հայեր 2-րդ մաս, Տասն օր տանը 2-րդ մաս/
- Հայոց լեզվի և հայ.գիտ դասնթացի հոլովակների պատրաստում - 5 մասից ֆինանսավորման ծավալը կազմել է 2100.00 հազ. դրամ /1 խտասալիկ/
- Սիրիահայերին նվիրված ֆիլմի բազմացման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 112.50 հազ դրամ /DVD խտասալիկ 125 օրինակ/
- Սփյուռքի մասին պատմող ֆիլմի ձեռք բերում և բազմացում - ֆիլմի համար ֆինանսավորման ծավալը կազմել է 624.0 հազ դրամ /1 ֆիլմ 130օրինակ/
- 2012 թվականին Ռոստովում կայացած հավաքին նվիրված ֆիլմի ձեռք բերում ֆինանսավորման ծավալը կազմել է 400.00 հազ դրամ, բազմացման ծառայությունը 112.50 հազ. դրամ /125 օրինակ/
- Վ.Վարթանեսյանի սկավառակների ձեռք բերում» - ֆինանսավորման ծավալը կազմել է 700.00 հազ դրամ /140 օրինակ/
- Հայաստանի մասին պատմող ֆիլմ ֆինանսավորման ծավալը կազմել է 624.00 հազ դրամ /1 օրինակ 130 հատ/
- Արցախի մասին պատմող ֆիլմ ֆինանսավորման ծավալը կազմել է 624.00 հազ դրամ /1օրինակ 130հատ/
- «Գոլոս Արմենիի» օրաթերթում նյութերի տեղադրման և լուսաբանման ծառայություն - ֆինանսավորման ծավալը կազմել է 980.0 հազ դրամ
- «Հ. Թումանյանի հեքիաթների հիման վրա երկլեզու ձայնասկավառակի պատրաստում» - ֆինանսավորումը կազմել է 1200.0 հազ դրամ /250օրինակ/
- «Սփյուռք» ամառային դպրոցի մասին պատմող հոլովակի պատրաստման ծառայության ձեռք բերում - 1840.00 հազ. դրամ
- «Հայաստանի ճամփեքին» հաղորդաշարի պատրաստում - 6000.00 հազ. դրամ

10. «Գիտական և գիտատեխնիկական հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» (բաժին 01, խումբ 04, դաս 01, ծրագիր 02) ծրագրի շրջանակներում պետական աջակցություն

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով հաստատվել է 10800.00 հազ. դրամ, որից ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 10800.00 հազ. դրամ: 2012 թվականի նկատմամբ 2013 թվականին գումարային փոփոխություն տեղի չի ունեցել: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

• **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի իրականացման նպատակն է Պետական պատվերի միջոցով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացնել սփյուռքին վերաբերվող 9 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

2013 թվականին ծրագրի շրջանակներում պատվիրվել են թվով 9 գիտական հետազոտություններ հետևյալ կազմակերպություններին.

1. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները», «Պաշտոնական լեզվում օգտագործվող օտարահունչ բառերի հայրենացմանն ուղղված գրքույկի պատրաստում և հրատարակում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

2. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ - ին, «Գրական սփյուռք 2013» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

3. «Նորավանք» գիտական հիմնադրամին, «Սփյուռքի գիտական և վերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ», «Հայագիտական կենտրոնները Սփյուռքում, ներուժի գնահատում», «Կարինի նահանգը 19-րդ դարի երկրորդ կեսին» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 3600.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

4. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին, «Հայկական սփյուռք գիտական տարեգիրք», «Սփյուռքագիտության տեսության և պատմության հարցերը» «Ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2400.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

5. «ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Իրանի հայ համայնքը արդի փուլում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

6. «ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Միգրացիան և նոր Հայկական Սփյուռքը» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

2012 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 10800.00 հազ.դրամ:

11.«Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում» ծրագրի վերաբերյալ Բաժին 09, Խումբ 04, Դաս 02, Ծրագիր 03

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 3600,0 հազ. դրամ, որից ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 1800.0 հազար դրամ: 12 ուսանողների հատկացվել են ուսման վճարներ: Ծրագիրն իրականացվել է մասամբ, քանի որ մինչ այժմ ՀՀ պետական բյուջեի հաշվին պատրաստվել է 39 սփյուռքագետ, այժմ սփյուռքի նախարարությունը նպատակահարմար չի համարում ՀՀ պետական բյուջեի հաշվին մասնագետների պատրաստումը: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 3600,0 հազ. դրամ:

12.«Սփյուռք տարեգրքի պարբերականի հրատարակում» ծրագրի վերաբերյալ Բաժին 08, Խումբ 03, Դաս 02, Ծրագիր 14

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով հաստատվել է 8200.00 հազ.դրամ: ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1168-Ն որոշմամբ ծրագրից տեղի է ունեցել վերաբաշխում 2491 հազ. դրամի: Ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 5709.00 հազ.դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 6783.95 հազ.դրամ: 2013 թվականին 1074.95 հազ. դրամով պակասել է, քան 2012 թվականին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն տեխնիկական բնութագրի նկատմամբ, ինչը եղել է 2012 թվականին: «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ավել ցածր գնային առաջարկ:

13.«Հայրենիք Սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում» ծրագրի վերաբերյալ Բաժին 08, Խումբ 02, Դաս 04, Ծրագիր 04

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 32435.50 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 32572.20 հազ.դրամ: 2012 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 31822.60 հազ. դրամ: 2012 թվականի և 2013 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը նվազագույն աշխատավարձի և էլ. էներգիայի բարձրացման արդյունքն է: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

14.«Պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի վերաբերյալ Բաժին 10, Խումբ 09, Դաս 02, Ծրագիր 03

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 14520.00 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 11297.00 հազ. դրամ և դրամարկղային ծախսը կազմել է 11110 հազ. դրամ: 2013թվականի դրամարկղային ծախսը բյուջեով հաստատված պլանի նկատմամբ պակաս է իրականացվել 3410 հազ. դրամով՝ պայմանավորված սոցիալական փաթեթից օգտվելու իրավունք ունեցող ավելի փոքր թվով շահառուների քանակով: 2012 թվականին բյուջեյով հաստատվել է 7680 հազ. դրամ,

Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 6496.62 հազ. դրամ: 2013 թվականի հատկացումը 2012 թվականի նկատմամբ աճել է 6840 հազ. դրամով, որը պայմանավորված է շահառու հանդիսացող աշխատողների թվաքանակի ավելացմամբ:

17.22 կառավարության պահուստային ֆոնդ

2013 թվականին հատկացվել է 76166.0 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 75286.30 հազ. դրամ: 2012 թվականին պահուստային ֆոնդից գումար չի հատկացվել:

2013 թվականի ընթացքում համաձայն ՀՀ կառավարության 21.03.2013 թվականի թիվ 312-Ս որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հողվածով 53000.00 հազ. դրամ գումար է հատկացրել Վենետիկի Միխարյան Միաբանությանը թվայնացնող հիմնական և օժանդակ սարքավորումներ ձեռք բերելու համար, ձեռագրատանն ու մատենադարանում պահվող հայկական ձեռագիր մատյանների և հազվագյուտ, հնատիպ գրքերի թվայնացման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Համաձայն ՀՀ կառավարության 10.10.2013 թվականի թիվ 1168-Ն որոշմամբ 6805.0 հազ. դրամ («Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հողվածով 930.0 հազ. դրամ, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հողվածով 320.0 հազ. դրամ, «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հողվածով 235.0 հազ. դրամ «Վարչական սարքավորումներ» հողվածով 5320 հազ. դրամ) գումար է հատկացվել սփյուռքի նախարարությանը՝ նախարարության կարիքները հոգալու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 26.12.2013 թվականի թիվ 1474-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետություն ժամանած «Սահակեան» երգչախմբի օտարերկրյա քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման համար նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Պարտադիր վճարներ» հողվածով հատկացվել է 270.0 հազ. դրամ: Այն փոխանցվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հաշվեհամարին:

Համաձայն ՀՀ կառավարության 07.11.2013 թվականի թիվ 1251-Ն որոշմամբ 2013 թվականի հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 3-ը Երևանում կայացած Հայ մարմնակրթական ընդհանուր միության 9-րդ համահայկական մարզախաղերին մասնակցվելու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանած օտարերկրյա քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման համար նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Պարտադիր վճարներ» հողվածով հատկացվել է 591.0

հազ.դրամ: Այն փոխանցվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ ԱԳՆ-ի հաշվեհամարին:

Համաձայն ՀՀ կառավարության 05.12.2013 թվականի 1355-Ն որոշման ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով 15000.00 հազ.դրամ գումար է հատկացվել սփյուռքի նախարարությանը: